ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«30» օգոստոսի 2023 թվականի N: 339-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 95-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 5-րդ մասերի, 96-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 3245-Ա հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2023 թվականի աշխատանքային ծրագիրը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N ԳՍ/20.1/33073-2022 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացնել իրավական հսկողություն:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական հսկողության կատարման

ժամկետը, հսկողությունն ընդգրկող ժամանակահատվածը և իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Իրավական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N 03-Ն հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարով:

4. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների նկատմամբ իրականացված իրավական հսկողության իրականացումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմել արձանագրություն, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2023 թվականի օգոստոսի 30-ի N339-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԳՐԿՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Հ/հ	Համայնքի անվանումը	Իրավական հսկողության կատարման ժամկետը	Իրավական հսկողությունն ընդգրկող ժամանակահատվածը	Իրավական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք	
				Զբաղեցրած պաշտոնը (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անունը, ազգանունը
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերով վարչության պետ, խմբի ղեկավար	Արամ Անտոնյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Արտավազդ Գևորգյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերով վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Արթուր Գրիգորյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Հուրիկ Մարտիրոսյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերով վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Լուսինե Մովսիսյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ, խմբի անդամ	Էմիլ Պետրոսյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Անդրանիկ Նալբանդյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Տիգրան Անանիկյան

1.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք	2023 թվականի սեպտեմբերի 11-ից 19-ը	2022 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 1-ը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Վահան Մարտիրոսյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Աղավնի Հարությունյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Արմեն Ստամբոլցյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերով վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Վաղինակ Հովհաննիսյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերով վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Արիգա Ռաֆայելյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Համազասպ Մարտիրոսյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ, խմբի անդամ	Հովհաննես Գաբրիելյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության ավագ մասնագետ, խմբի անդամ	Շիրակ Երանոսյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերով վարչության ավագ մասնագետ, խմբի անդամ	Էդվարդ Ալեքսանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է